

չըջաններէ մեծաթիւ բազմութիւն պիտի խուժէ հանդիսին եւ այսպէս առատ պիտի հոսէ Աթոռին դրամական տուրքը: Առանց յապաղութեան եպիսկոպոսներէն ոմանք կը յայտնեն կաթողիկոսի փափագը Մովսէս վարդապետին: Բայց կը մերժէ Վարդապետը իրեն ներկայացուած խնդիրը, առարկելով թէ «Ես ոչ ունիմ զաստիճան եպիսկոպոսութեան, ո՛չ է այդ իմ դործ, այլ այնոցիկ որ եպիսկոպոսք են»: Արգելքը դիւրին էր բառնալ: Կաթողիկոսը սլատրաստ ընծայեց ինք զինքը տալու անոր եպիսկոպոսական աստիճան: Մովսէս թէպէտ ի սկզբան առ խոնարհութեան հուզեց յանձն առնել ձեռնադրութիւնը, բայց ապա զիջաւ աշակերտներուն եւ ժողովրդեան խնդրանքին վրայ, տալու իւր հաւանութիւնը: Մեղքիսեղեկ եկաւ իւր շուքովը Ս. Անանիայի անապատը, եւ բաշխեց վարդապետին եպիսկոպոսական ձեռնադրութիւնը, որ տեղի ունեցաւ Աւագ երկուշաբթի (Առ. 296. տարին չէ նշանակուած¹):

Աւագ հինգշաբթի օրը, ի ներկայութեան մեծ բազմութեան կատարեց Մովսէս եպիսկոպոս Ս. Միւռնի օրհնութիւնը:

Զուղայեցի վաճառականները, որոնք ներկայ գտնուած էին արարողութեան, հիացմամբ պատմեցին ի նոր Զուղայ իրենց տպաւորութիւններէն: Զուղայեցիք, որոնք լսած

¹ Օրմանեան՝ Ազգասպասում, Բ., 2365 կը զնն տարին 1623 Ապր. 7: